

# چاهاکیر

جريدة أسبوعية

ص.ب 2111 بالقاهرة ج.م.ع - ت: 3914908

## TCHAHAKIR

Armenian Weekly

P.O.Box 2111 (Calro),

Tel: 3914908, Fax: (202)4530327

E-mail: emarco@ritsec3.com.eg

# ՀԱԿԻՐ

## ՀԱՅԵՐԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐՈՒ

ՀԱՏՈՒՅՑ 50 ԵԳ. ԴԻԿ.

عدد رقم 1397 - الخميس 4 مارس 1999

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Կիրակի 21 Փետրուար 1999-ի յետմիջօրէին. Հաճոյքն ունեցանք ընդունելու այցելութիւնը Գայի-Փորնիոյ Նահանգի՝ Կլէտտէյի շրջանի մէջ, անգլերէն լեզուով հրատարակուող Armenian International Magazine «AIM» ամսաթերթի գլխաւոր խմբագիր՝ Պր. Հրաչ Չիլինկիրեանի, ընկերակցութեամբ Համայնքիս ազգայիններէն՝ Պր. Թովմաս Զաքարեանի:

Աւելի քան երկու ժամ հետաքրքիր գրոյց ունեցանք յարգելի խմբագրին հետ, որուն ընթացքին խօսեցանք ընդհանրապէս սփիւռքահայ եւ մասնաւորապէս եգիպտահայ Համայնքները հետաքրքրող հարցերու շուրջ:

Ձերմ մթնոյորտի մէջ, ան կարգ մը տեղեկութիւններ տուաւ ամերիկահայ գաղութի մասին: Ապա նիւթին առանցքը առաւ Հայրենիքն ու Արցախը եւ անոնց շուրջ յուզող ներկայ իրադարձութիւնները:

Մտերմիկ գրոյցի ընթացքին յարգելի հիւրը հետաքրքրուելէ ետք թերթիս տարած խմբագրական դժուար աշխատանքով, իր գնահատանքը յայտնեց, ապա անդրադարձաւ «AIM»-ի տարած ազգօգուտ գործունէութեան, որմէ տեղեկացանք թէ ամսաթերթը յոյս կր տեսնէ 1990 տարիէն ի վեր. 2

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

1



Պր. Հրաչ Չիլինկիրեան

պատկերազարդ եւ որակաւոր տպագրութեամբ: Ունի 30 Հազար թաժանորդ, 70 երկիրներու մէջ:

Բարի վերադարձ մաղթեցինք մեր սիրելի հիւրին եւ յաջողութիւն՝ իր տարած պատուարներ առաքելութեան մէջ: